

առաւ - 920.14-1



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԻՐԵՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 14

22 ՄԱՅԻՍ 1920

Հայ եղեւնին մսաւորական զոհերէն, մեծ
մարտիրոսներէն

ԳԻՆ 100 ՓՐ.



ԶԱՐԵՀ ԳՈԶԵԱՆ

ՏՔԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային
եւ ճղայոց հիւանդութեանց
Գումգարու, Զիֆթէ Կէլին. դեղ. Ս. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, Երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի, Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիրքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րագնին քննութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջքը
կ'առնէ, Հիւանդագին եւ փափկակազ
տղարներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ.

ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏ. — Պզտիկնե՛ր, 250
դրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողը-
նիդ առաջնորդեցէ՛ք Զաքմաքճըլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը.

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԷՐԵԱՆ

Զաքմաքճըլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայազիտ, Մաքասճըլար, թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ

ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը.

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ
ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ
ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻԻ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԱՆ ԱՏՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, նոր նամակատան դէմ, Վլօրա-
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր, գոլթօններ,
պոլիչներ եւ բիվօներ.

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱ ՊԱՀՈՒԹԻԻՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն.

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնե Գաբու: Մէյվախօս Խան—Հեռաձայն Սքամպուլ 319

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԻՐԵՑԷՔ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Փոքրիկ բարեկամներ՝

Յուսամ միտքերնիդ պահեցիք այն համառօտ բացատրութիւնները, զորոնք տուի ձեզի հասկնալի ընելու համար Բնութեան Սէրը: Նաեւ մոռցած ըլլալու չէք այն պատճառները, զորոնք փորձեցի համառօտակի վերլուծել ցուցնելու համար թէ ինչո՛ւ կը սիրենք Բնութիւնը: Այս անգամ կը փափաքիմ խօսիլ ձեզ Բնութեան Սիրոյն օգուտներուն մասին, թելադրելով ձեզ թէ, աղա՛ք, սիրեցէք Բնութիւնը:

Բնութեան Սէրը շատ մը օգուտներ ունի, որոնց մասին կարելի է շատ բաներ ըսել: Բայց ես կ'ուզեմ գլխաւոր քանի մը օգուտներուն մասին խօսիլ ձեզ:

Բնութիւնը սորվելու համար պէտք է սիրենք զայն: Այդ սկըզբունք մըն է, զոր կրնանք պատշաճեցնել ուսման շատ մը առարկաներուն համար: Անուբանալի է որ շատ դիւրաւ կը սորվինք այն բաները զորոնք կը սիրենք: Ձեզի համար ալ շատ հասկնալի չէ՞ այս: Ձեզմէ ուսմանք մասնաւոր սէր մը ունին ուսանողական գիտութիւններու համար և այդ իսկ պատճառով շատ դիւրաւ կը սորվին զայն: Հաճոյք մըն է այդպիսիներուն համար լուծել թուաբանական կամ ալճէպրայական դժուարին խնդիր մը: Իսկ կան ուրիշ աշակերտներ, որոնք սէր չունին ուսողութեան և շատ դժուարելով կը լուծեն թուաբանական կամ ուրիշ խնդիրներ: Մէկը՝ պատմութիւն, միւսը՝ գրականութիւն, ուրիշ մը քնական գիտութիւնները կը սիրէ և այդ պատճառաւ ալ դիւրաւ կը սորվի զանոնք: Եւ որովհետեւ Բնութիւնը ուսումնասիրութեան անհուն դաշտ մըն է և շատ բաներ պիտի սորվինք անկէ, ուրեմն պէտք է սիրենք զայն: Եւ Բնութիւնը սիրելով աւելի դիւրացուցած կ'ըլլանք անոր ուսումնասիրութիւնը: Սիրելի փոքրիկներ, գացէք Բնութեան, իբրեւ ուսուցիչի մը, բաց պահեցէք ձեր միտքերը այն դասերուն համար, զորոնք ձրիաբար կուտայ ձեզ Մայր Բնութիւնը: Կարգի կանոնի, արդիւնքի եւ պատճառի, փոխադարձ գործակցութեան, ներդաշնակութեան, պարզութեան մէջ գեղեցկութեան, ի՛նչ խորիմաստ դասեր դըրուած են Բնութեան այս բազմահատոր մատենաշարին մէջ: Ձեր միտքերը ո՛րչափ պիտի դօրանան ու զարգանան, ձեր ծանօթութիւններու պաշարը ո՛րչափ պիտի ճոխանայ, ձեր ըմբռնողութիւնը ո՛րքան պիտի

խորունկնայ երբ բաց միտքով և եռանդով ուսումնասիրէք Բնութիւնը ու սիրով սորվիք զայն :

Բնութեան Սէրը կ'ազնուացնէ նաեւ մեր հոգիները : Սիրելի ընթերցողներս ձեզ անմիջապէս ըսեմ թէ մեր ուսումն ու զարգացումը ,մեր մտաւորական կարողութիւններուն մշակումն ու աճումը , թէեւ շատ կարեւոր ու փափաքելի , բայց մեր կրթութեան , ճշմարիտ կրթութեան ամբողջութիւնը չէ : Կրնանք միտքով շատ զարգացած ու բարձր կարողութիւններու տէր մէկը ըլլալ , բայց այդ չի նշանակեր թէ մենք ներդաշնակ ու կատարեալ կրթութիւն ունինք : Սիրտին կրթութիւնը, հոգիին ազնուացումը շատ հիմնական ու կարեւոր սկզբունք մըն է մեր ճշմարիտ կրթութեան մէջ : Սշխարհի մէջ մարդկութեան ճշմարիտ բարերարները մինակ միտքով կրթուածները չեն եղած , այլ անոնք որ միտքի ու սիրտի , իմացականութեան և հոգիի ներդաշնակ կրթութիւն մը ունին , եւ այս տեսակէտով Բնութեան Սիրտն ունեցած օգուտը աննշմարելի բան մը չէ երբեք : Եթէ ձեր սիրտերն ու զգացումները չեն խաթարուած , ու մոլոր ուղղութիւններով չեն շեղած բանաւորութեան ճամբայէն , ինչ վսեմ ու ազնիւ ներշնչումներով պիտի ուռին ձեր սիրտերը Բնութեան այլազան ու հիասքանչ շատ մը տեսարաններուն առջեւ : Մագոզ վարդ արշալոյսներ , իրիկնամուտի ոսկի ճառագայթներ , աստեղազարդ երկինքը , լուսնկայ աղուոր գիշերները , պուրակներու խորհրդաւոր խորշափումները , թռչուններու ներդաշնակ դայլայլները , դաշտերու կապտագեղ տարածութիւնը , ամպերու դէզ դէզ քուլաները , բացուող ծաղիկը , աշնանահար տերեւները , զմրուխտ , մարգրիտ ,մայող դառներ , անմեղ մանկիկներ , ո՞ր մէկը թուեմ , բնութեան այս սլէսպէսուն պատկերները , ինչ ներշնչումներ պիտի արթնցնեն ձեր հոգիներուն խորը : Գեղեցկութեան , բարութեան , ազնուութեան , ինչ դասերով չպիտի կրթութիւն ձեր սիրտերը : Ես կը կարծեմ թէ երբեմն Բնութեան առանձնաբանը քաշուիլ ու անոր խորհրդաւոր ազդեցութեան ենթարկել մեր հոգիները՝ օգտակար ունակութիւն մըն է , որ յաճախ կ'անտեսուի մեր մէջ : Մարդիկ նիւթի ու նիւթականութեան այնչափ շատ կը յարին ու կը փարին որ բոլորովին մոռացութեան կուտան իրենց հոգիին ու սիրտին կեանքը . այսու այդ կեանքին մեծ ներշնչարանը, Մայր Բնութիւնը :

Դեռատի՛ ընթերցողներս , այս քանի մը պարզ թելադրութիւններով ձեզ պիտի ուղէի Բնութեան ու անոր դասերուն ու ներշնչումներուն շրկել : Սիրեցէք Բնութիւնը , արեւալոյսը , ծառը , ծաղիկը , լեռն ու գաշտը , ձորն ու անտառը , սիրեցէք կեանքը , գործն ու գործունէութիւնը , շարժումն ու խաղը , վերջապէս այն ամէն բաները , զորոնք Բնութիւնը կը հայթայթէ ձեզ իր անաշառ գանձէն : Դիմեցէք անոր , սիրեցէք ու սորվեցէք զայն և եղէք Բնութեան կեանքոտ ու խանդոտ հարազատ զաւակներ :

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ՀԱՅՐԵՆԻ ՏՆԱԿ

Ի՛նչ անուշ բան... այսօր նորեն.
Ո՛վ իմ սրնակ հայրենի
Գոհ, երջանիկ անհունօրեն՝
Համեստ յարկիդ սակն էի:

Իմ մանկութեան օրերն էին,
Ոսկի՛ օրեր, անմոռաց,
Կ'ապրէի այդ օրերը հին,
— Անակրնկա՛լ վերադարձ:

Նստած էի օճախին բով,
Կ'եռար սանր սպուրին,
Մայրս զբաղած սան խրնամբով,
Գուլպայ հիւսեր ծեր հանին:

Ժամին կոչնակն ալ սանկը — սանկ,
Ժամ կը կանչեր թաղեցին,
Դուրսն եր դադրած գործ, աշխատանք
Դարձի պահն եր՝ մրշակին:

Իրիկուն եր. նստանք նորեն
Շուրջն օրհնուած սեղանին,
Փա՛ռք էգ Աստուած,» սիրտին խորեն
Կը գոհանար ծեր հանին:

Ընթրիքն էսք, օճախին բով
Նրստած ինչպէս հին աշեն՝
Մայրս զբաղած դեռ սան գործով՝
Կը խօսէինք զըւարթ, շեն:

Սկսաւ պատմել հանին նորեն
Համով հեփեաթ մը շատ հին,
Ա՛լ մենք կախուած իր շուրթերէն
Մոռցանք իրերն աշխարհին:

Սենն ուշ եր, բունն անդորրիկ
Կը վազէր մեր աչքերէն,
Հանին ըսաւ. «Այսչափն հերի՛ք,
Վաղն ալ կ'ըսեմ ձեզ նորեն:»

«Հանի՛, հանի՛, ուրիշ մըն ալ,»
Կ'աղաչէինք բոյր, եղբայր,
«Ո՛չ, դուք պէտք էք ալ բընանալ՝
Բարի եղեք, չե՞, չը՛լար:»

Ու արթնցայ... ո՛չ հանին կար,
Ո՛չ ալ սրնակն հայրենի,
Օտարութեան սանս մեջ խաւար
Տեսաւս երազ մ'եր բարի:

Երազ ըլլամ կամ թե արթուն՝
Քեզ կը յիշեմ շարունակ,
Հին օրերու հմայնքն ես դուն
Ո՛վ հայրենի իմ սրնակ:

Բայց բռնութեան բունն փոթորիկ
Քեզ, կործանեց ի՛մ սրնակ,
Ոչ եւս է ա՛լ յարկդ անդորրիկ,
Եղար մոխիր, յիշատակ...:

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Գ.

Ծ Ա Ղ Ի Կ

Անցած շաբթուան խոստումիս համաձայն ձեզի պիտի խօսիմ բոյսին ամենէն հետաքրքրական ու նոյն ատեն հրապուրիչ մէկ մասին, ծաղիկին վրայ: Ինչո՞ւ համար մենք բոլորս ալ կը սիրենք ծաղիկները: Պատասխանը շատ պարզ և յայտնի է, չէ՞: Մենք ծաղիկները կը սիրենք անոնց գեղեցիկ ձեւերուն, ազուր գոյներուն և ոմանց անուշ բոյրերուն համար:

Ծաղիկներուն ձեւերը. — Ծաղիկները շատ տեսակ ձեւեր ունին: Ծաղիկներու աչնչափ տեսակներ կան, որչափ տեսակներ կան տերեւներու: Բայց դուք ծաղիկ մը տերեւէ մը շատ դիւրաւ կրնաք զանազանել անոր ձեւէն իսկ, առանց գիտնալու մինչև անգամ անոր գոյնը:

Ահաւասիկ տերեւի մը ու ծաղիկի մը պատկերները: Այս պատ-



կերներուն նայելով դիւրաւ կըրնաք ըսել թէ ո՞րն է տերեւը և ո՞րն է ծաղիկը, թէև հոս գոյն չէք տեսներ: Այս ի՞նչպէս կ'ըլլայ: Դուք կը տեսնէք որ տերեւը ծիղ մըն է լոկ, իսկ ծաղիկը կը բաղկանայ շատ մը ծիղերէ որոնք շրջանակաձև կը կենան:

Շափրակներ. — Բոյսերէն շատեր, շուշանի նման ծաղիկներ ունին: Ոմանք երեք թերթէ բաղկացեալ շափրակներ ունին օղա-

կաձև, ուրիշներ չորս հատ, ոմանք հինգ, ոմանք վեց, եօթը, ութը,



Ծաղիկին շափրակներ

ինքը, տասը կամ աւելի թիւով շափրակաթերթեր: Ահա այս թերթերը, ինչպէս ըսինք շափրակներ կը կոչուին: Հինգ շափրակով ծաղիկներ շատ կան: Դիւրութեան համար հոս կը դնենք շափարկներու օղակաձև շարուածքով ծաղիկ մը որ կըորաձեւ է: Եւ դիտած էք որ բոլոր ծաղիկներու վրայ կըորաձեւ բան մը կայ վերջապէս: Եթէ այդ փոքր շափրակները ճիշդ օղակաձև շարուած չեն իսկ, գոնէ վստահաբար հաստատուած են կըորաձև պարկիկի կամ խողովակի մը վրայ որ փետրանման է:

Կրնայ ըլլալ որ իրարմէ անշատ պզտիկ շափրակաթերթեր գոյութիւն չունենան, ու բոլորը իրարու միացած ըլլան, ծաղիկին բաժակի մը ձեւը տալով: Դուք կրնաք այս առթիւ խորհիլ զանգածաղիկներու մասին, որոնք խորունկ բաժակի ձեւ ունին, կամ աւելի պատշաճ է ըսել թէ զանգակիկներու կը նմանին, եղբրքները քիչ մը կտրատած ձեւով: Կըորաձեւ տերեւներ ալ կան անտարակոյս, բայց անոնք դատարկ կամ բաժակաձեւ չեն, ինչպէս են ծաղիկները. անոնք սովորաբար տափարակ են:

Առեջը կամ որձան. — Ծաղիկներէ ոմանք պզտիկ թելաձև

բաներ մը ունին, յաճախ դեղնա-
գոյն որ օղակաձև շրջանակին
բաժակին մէջը կը ցցուին: Շատ
մը բոյսերու մէջ անոնք ծաղիկին
տակէն վեր ցցուած կ'ըլլան. այդ
իւրաքանչիւր թելիկին ծայրը
գնդիկ մը կ'ըլլայ, հազիւ գնդա-
սեղի մը գլուխին չափ կամ քիչ
մը աւելի մեծ, բայց ոչ այնչափ
կլորած: Այս փոքրիկ գնդիկ-
ները յաճախ նեղ ու երկայն են,
կամ, ինչպէս յաճախ կ'ըսենք
ձուլած են: Ահա այս գնդակա-
ձեւ ծայրերով թելերը կը կոչուին
առեջներ կամ որձաներ:

Իգան կամ սերմնափակը.—
Կարգ մը ուրիշ ծաղիկներու նա-
յելով կրնայ ըլլալ որ այս առեջ-
ները չտեսնէք. բայց անոնց տեղ
ճիշդ ծաղիկին կեդրոնը, ցցուած
ուրիշ թելաձեւ բաներ պիտի
գտնէք: Անոնք կրնան մէկ կամ
երկու, երեք, չորս, հինգ կամ ալ
աւելի ըլլալ ծաղիկի մը մէջ: Ա-
նոնք առեջներու կը նմանին, բայց
ծայրի գնդիկները, եթէ ունին,
աւելի կլորած են յաճախ, և ձե-
ւով փոքրիկ ուլունքի մը կը նմա-
նին: Ահա այս կլոր գլուխով թե-
լիկները իգայ կամ սերմնափակ
կը կոչուին: Իգաներէն ոմանք
երկու, երեք, չորս, հինգ կամ ա-
ւելի գնդիկներ ունին:

Յորդոր.— Սիրելի փոքրիկներ,
ծաղիկը բոյսին ամենէն հետա-
քրքրական մասն է, ինչպէս ըսի
վերը. ահա այդ պատճառաւ
յարմար կը դատեմ որ այս դա-
սին շարունակութիւնը տամ յա-
ջորդով: Բայց կը թելադրեմ որ
մինչև յաջորդ դասը ձեր հան-
գիստած բոլոր ծաղիկներուն վրայ

փնտռէք այս դասով ձեր սորված
մասերը. այսինքն ծաղիկներուն
ձեւերը՝ առհասարակ, շախա-
կաքերքերն ու անոնց շարուածքը,
առեջը կամ որձան, ինչպէս նաև
իգան սերմնափակը, մանաւանդ
որձային ու իգային ծայրի գնդիկ-
ները ու անոնց պէսպէսութիւն-
ները:

Ուրեմն, ցտեղութիւն մինչև
մեր յաջորդ դասը ծաղիկներու
մասին:

Ամփոփեց
ԳՐ. Լ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ի

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ

Ես քեզ կ'ըսեմ՝ գանձ,
Կր հասկընաս՝ Տանձ.
Խօսք չի հասկըցող
Մարդը՝ չըլլայ թո՛ղ:

Ջրկըւողն ապրե՛ր է,
Վա՛յ գրկողին,
Խեղճերուն ի՞նչն Աստուծ է,
Վա՛յ լրբողին:

Չա՛րկ, ըսինք,
Մեռցու՛ր՝ չըսինք.
Վերցո՛ւր՝ ըսինք,
Թռցու՛ր՝ չըսինք:

Չօրաւոր ձեռքը
Պագիր գլուխդ դիր,
Ուժեղը յանախ
Չի դներ խրսիր:

Է՛սն ի՞նչ գիտէ
Նու՛սն ի՞նչ է,
Յիմարին՝ գանձն
Ոչինչ է:

ԱՌԱԿԱԽՕՍ

ԳԱՅԼԸ ԵՒ ՄՈՒԺԻԿԸ

Որսորդներէն հալածուող գայլ մը կը հանդիպի մուժիկի մը որ իր երկրագործական գործիքներով գաշտը կ'երթար :

— Օգնութիւն... , հայրիկ . .

— Կը բացագանչէ գայլը—որսորդները զիս կը հալածեն և շուտով պիտի հասնին :

Որսորդը խղճալով պարկին մէջ դրաւ զայն ու նետեց իր ուսը : Քիչ մը քալելէ վերջ որսորդները հանդիպեցան մուժիկին և հարցուցին անոր .

— Ըսէ՛ . եղբա՛յր , դուն չը տեսա՞ր այն գայլը որ այս կողմերէն կ'անցնէ :

— Ո՛չ , ո՛չ , չը տեսայ—պատասխանեց մուժիկը :

Եւ երբ որսորդները հեռացան՝ մուժիկը գայլը պարկին մէջէն հանեց բայց ան փորձեց յարձակիլ մուժիկին վրայ և յօշոտել զայն :

— Օ՛ , անշնորհք , գայլ . . . — ըսաւ մուժիկը արտասուալից . — չե՞ս ամհնա՛ր . դեռ հիմայ կեանքդ փրկեցի , յօշոտել կ'ուզե՞ս զիս :

— Լաւ գործերը շուտով կը մոռցուին— պատասխանեց գայլը :

— Ո՛չ , ո՛չ . չեն մոռցուիր . հարցո՛ւր որու որ կ'ուզես և ամէնքը պիտի հաստատեն ըսածս :

Գայլը քանի մը քայլ առաւ և յարեց .

— Լաւ , միատեղ քալենք և առաջին հանդիպողին հարցնենք թէ՛ իսկապէս լաւ գործը կը մոռցուին թէ ո՛չ . եթէ քու ըսածդ ճշդուի՝ աղէ՛կ , ապա թէ ոչ պիտի յօշոտեմ զքեզ :

Եւ ճամբան շարունակեցին :

Հազիւ քանի մը վայրկեան քալած էին ծեր ձիու մը հանդիպեցան . որուն ուղղեց մուժիկը իր հարցումը .

— Ըսէ՛ ինձ , լա՛ւ գործերը կը մոռցուին թէ ոչ :

Ձին հառաչելով ըսաւ անոր .

— Ո՛հ , ես շատ լաւ դիտեմ այդ : Ես տասներկու տարի ապրած եմ տիրոջս տունը և իրեն լոյս աշխարհ բերած եմ ուրիշ շատ մը ձիեր չարաչար աշխատելով հանդերձ : Վերջին տարին աչքս կուրցաւ և օր մը սայթաքեցայ և ինկայ . տէրս զիս սատիկ հարուածելէ վերջ սլոշեա քարչ տուաւ և իբր մահամերձ զիս նետեց ճամբուն եղերքը , ինքզինքիս ուժ տուի և առիքակեցի . ո՛ւր , չէի զիտեր :

Գայլը ժանիքները բանալով կրկնեց .

— Տեսա՞ր Մուժիկ թէ ինչպէս լաւ գործերը կը մոռցուին :

— Սպասէ , շարունակեց Մուժիկը ուրիշի մըն ալ հարցնենք :

Քիչ մը անդին հանդիպեցան ծեր շան մը որ կը կաղար և վրշտաբեկ ինքզինքին քարչ կուտար .

— Շո՛ւն— միջամտեց մուժիկը— կ'ուզե՞ս ինծի ըսել թէ՛ լաւ գործերը կը մոռցուին թէ ոչ :

— Ըսէ՛ , ինչ որ պիտի պատմեմ քեզ—հեկեկաց շունը— Տասներհինգ տարի ապրեցայ տիրոջս տունը , իր թթապտանը պահպանեցի , յարձակելով կը խածնէի ուրիշները . և երբ առանց ակռայի մնացի , զիս վռնտեց տունէն : Ինչպէս կը տեսնէք զիս այս վիճակիս հասցուց բիրտ հարուած—

ներով : Ընկճուած մարմինս կըր-
ցածիս չափ քաշկուտեցի և քաշեցի
անծանօթ ուղղութեամբ , որպէսզի
հեռանամ իմ ապերախտ տէրոջս
քովէն :

Այն ատեն գայլը ստիպեց մու-
տիկը որ իր խոստումը կատարէ :
Բայց մուտիկը խողրելով յարեց .

— Սպասենք երրորդի մը :

— Այս անգամ տեսան աղ-
ուէս մը որ ճամբան կը սլքտար ,
գայլը աճապարանօք հարցուց .

— Ըսէ՛ , աղուէս , լաւ գոր-
ծերը կը մոռցուի՞ն թէ ոչ :

— Ինչո՞ւ կը հարցնես , ըսաւ
աղուէսը :

— Ահա թէ՛ ինչո՞ւ , պատ-
մեմ— ըսաւ Մուտիկը— Գայլը կը
հետապնդուէր որսորդներէ որոնք
զինքը կ'ուզէին սպաննել , եկաւ
ինձմէ օգնութիւն խնդրեց , ես
պահեցի զինքը պարկիս մէջ , հի-
մայ փոխանայդ բարիքիս և երախ-
տագիտական տրտայայտութեան ,
կ'ուզէ յօշոտել զիս :

— Միթէ կարելի՞ է այսպէս
խոշոր գայլ մը պարկիդ մէջ տե-
ղաւորել— հարցուց աղուէսը :—
Եթէ ես տեսնէի այդ բանը կըր-
նայի գոհացում տալ ձեր հարց-
ման :

— Բայց այո՛ , գայլը պար-
տկեցաւ անոր մէջ— ըսաւ մուտի-
կը— եթէ չէք հաւատար հարցու-
ցէք իրեն :

— Ուրեմն փորձէ՛ տեսնենք
ինչպէս մտար պարկը , այդ փոր-
ձով միայն կրնաք զիս համոզել :

Գայլը առանց սպասելու որ
աղուէսը իր խօսքը լնցնէ մտաւ
պարկին մէջ ու հեգնական շեշ-
տով մը ,

— Ահա՛ թէ՛ ինչպէս մտայ :

— Մտի՛ր , մտի՛ր , ամբողջա-
պէս մտի՛ր , որովհետեւ չեմ տես-
ներ թէ՛ . . .

Երբ գայլը հնազանդելով լաւ
մը տեղաւորուեցաւ այն ատեն
աղուէսը ըսաւ մուտիկին .

— Շուտ ըրէ՛ կապէ՛ պարկը :

Մուտիկը կապեց պարկին բե-
րանը և աղուէսը ուղղելով խօս-
քը մուտիկին .

— Ըսէ՛ , ինչպէ՞ս կը ծեծես
ցորենը :

Եւ մուտիկը ծիծաղելով սկսաւ
հարուածել պարկը հաստ բիրով
մը :

— Ահա՛ այսպէս կը ծեծեմ
ցորենը— ու գայլը սպաննեց այդ
սոսկալի հարուածներուն առկ՛
ըսելով գայլին .

— Ինչպէ՞ս . լաւ գործ մը կը
մոռցուի՞ : Լ. ԹՕԼՍՏՈՅ

Թարգմ. Խոսրով Գ. Ներսիսեան
Եկտի Գուլէ

ՏԿԱՐԱԿԱԶՄՆԵՐՈՒՆ ԱԶԳՐ ԼՈՅՍ

ՄԷԿ ՔԱՆԻ ՕՐԷՆ
DYNAMOGÉNE R

ՈՒԺԱԾԻՆԸ

Կ'ուզայ ուժ եւ առողջութիւն ՏԱՂ
Պատրաստութիւն դեղագործ Վա-
հան Պէրպէրեանի Նուրը Օսմանիէ :

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ.— Ա-
մէն ուրբաթ կը հրատարակուի ԻԳՆԱՏ
ԱՂԱ՝ երգիծաթերթը՝ խմբագրութեամբ
ծանօթ երգիծաբան Տիար Եր. Օտեանի-
զին 5 դահեկան . Իսկ ամէն երկուշաբթի
առտունները՝ ՇԱԻԻՂ-ԻԳՆԱՏ ԱՂԱ միաց-
եալ . — Բշ. առտունները կը հրատարակ-
ուի նաեւ ԱՌԱՒՅՏ լրագիրը ամենաւեր-
ջին լուրերով եւ ճոխ բովանդակութեամբ :
— Փնտռեցէք նաեւ ամէն կողմ ՈՍՏԱՆ
գրական հանդէսը՝ զին 12 եւ ՀԱՅ ՍԿԱ-
ՈՒՏ Հ. Մ. Ը. Միութեան կիսամսեայ
հանդէսը՝ զին 10 դրշ. . Ինչպէս նաեւ
«Հայ Կին»ը .

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Գ.— ՏԵՂԱԿԱԼ ՔՕԹՊԻՒՍԻ ԵՐԱԶԸ

«Ահ, ըսաւ ան մօտենալով փոքրիկ աղախինին, շատ մը ոսկի ունի՞ք ուրեմն. խոստովանեցէ՛ք, մի՛ վախճաք: Զեղ չպիտի յանդիմանեն և ընդհակառակը լաւ վերաբերումի մը առարկայ պիտի ըլլաք: Օ՛հ, ըսէ, ո՛ւր են այդ ոսկիները:

— Անոնք իմն չեն, կակազեց Մարթա ամենամիամիտ արտայայտութեամբ մը: Բայց անոնց ուր պահուած ըլլալը գիտեմ:

— Շատ կա՞ն անոնցմէ:

— Այո՛, գրեթէ ամբողջ սընտուկ մը: Ես հոն էի, երբ պատերազմին սկիզբը թաղեցին զայն:

— Ո՛ւր: Զեղի կը հարցնեմ ո՛ւր, պոռաց տեղակալ Քօթպիւս անհամբերութենէն և հետաքրքրութենէն դողահար:

Այն ատեն, Մարթա, վարանումէ մը վերջ, իր ամենաանմեղ ձայնովը, գաղտնիք մը մատնելու պէս, մըմռաց.

«Փօնթէն օ Րիզ:»

Տեղակալ Քօթպիւս քանի մը անգամ յեղյեղեց այդ անունը որ իրեն օտար թուեցաւ, և զայն քարտէսին վրայ գտնելէ վերջ միայն հանդարտեցաւ: Եւ այն ատեն հեռաւորութիւնը հաշուեց և հաստատելէ վերջ թէ՛ այս հռչակաւոր Փօնթէն օ Րիզը հաղիւ թէ Սէնթ-Պաուլի ագարակէն քիլօմէթր մը հեռու կը գտնուի, պոռաց.

«Բայց հեռու չէ: Անոր ուր ըլլալը շատ լաւ կը տեսնեմ: Մեծ ճամբուն ձախէն, անտառին մէջէն երկարող արահետին հետեւիլ կը բաւէ...»

Եւ հրամայելով երկու զինուորներու, որոնք փոքրիկ աղախինը առաջնորդած էին, տեղակալ Քօթպիւս այն լատեն իր կրունկին վրայ արագօրէն դարձաւ և ուղղուեցաւ դէպի իր ընկերը, որ միշտ պաղարիւն ու ուղիղ կեցած սիկառ կը ծխէր դիտելով հորիզոնը հարցուց.

«Այն տեղը զոր մենք լքեցինք, քրանսացիներուն եկած ըլլալու մասին լուր մը կա՞յ:

— Երկու օր վերջը միայն կրնան անոնք հոն գալ: Անոնք տակաւին չեն գիտեր թէ մենք անկէ մեկնած ենք:

Գերման սպան այս հաստատական պատասխանը տալէ վերջ շարունակեց իր սիկառը ծխել:

«Այս երեկոյ, գիշեր ատեն նաւ պիտի նստեցնենք այս մարդիկը:

— Ճիշդ ժամը քսանեւեակին:

— Ուրեմն, շարունակեց տեղակալը, ու է անպատեհութիւն մը առաջ չի՞ գար երբ ես Սէնթ Պարպ ագարակը վերադառնամ:

— Ոչ մէկ անպատեհութիւն:

— Արդէն անմիջապէս վերա-

դառնալու համար պիտի երթամ :
Երթալս և վերադառնալս երկու
ժամի գործ է . այդչափ անգամ
չի տեսեր : Հետո երկու մարդ պի-
տի առնեմ աւելի ապահով ըլլա-
լու համար : Մանաւանդ որ այն
երկիրը , ուրկէ մենք քանի մը
ժամ առաջ հեռացանք , ծեր և
անկարենք միայն ձգեցինք . ո և է
վտանդ առաջ չի կրնար գալ :

Սպան աչքերը իր տեղակալին
ուղղելով , հարցուց անոր հեգնե-
լով .

«Արդեօք բա՞ն մը մոռցաք
Սէնթ Պաուլ ագարակը :

Տեղակալ Քօթպիւս , իր հովա-
հարածեւ մօրուքը շոյելով , ան-
տարբեր երեւոյթով մը պատաս-
խանց .

— Հոն , ոսկիներ , և շա՛տ մը
ոսկիներ մոռցայ , կ'արժէ որ հոն
երթամ :

Եւ իր պաշտօնակցին օժան-
դակութիւնը և համակրութիւնը
ապահովելու համար տեղակալը
փութաց աւելցնել .

«Բնականաբար դուք ալ ձեր
բաժինը պիտի ունենաք այս ա-
նակնկալ գանձէն :

Յետոյ Քօթպիւս պատմեց ե-
րեք ոսկիներուն պատմութիւնը ,
և որուն հետեւանքով ան «խիստ ,
որոշ և հրապուրիչ» հարցաքննու-
թիւնը , որով կրցած էր ինք խել
փոքրիկ աղախինէն այդ գաղտ-
նիքը :

Տեղակալ Քօթպիւսի պաշտօ-
նակից սպան , այսպիսի գիւտէ մը
օգտուելու յոյսէն լաւ կերպով
տրամադրուած , անոր թեւէն
բռնելով բարեկամաբար ըսաւ .

«Լաւ խորհուրդ մը կ'ուզէ՞ք :

Փոքրիկ աղախինը ձեզ հետ տա-
րէք , և եթէ ան իր խոստումը
չպահէ , զինքը հրացանազարկ ը-
նել սպառնացէք : Եւ ի հարկին
հրացանազարկ ալ ըրէք զինքը :

— Իմ ալ մտադրութիւնս այդ-
էր , պատասխանեց տեղակալ Քօթ-
պիւս ժպտելով : Երբ խնդիրը ոս-
կիները գրաւելուն շուրջ է ամէն
միջոց լաւ է և ներելի , նախ մեղ-
մութիւն և եթէ այս չի բաւէ
բռնութիւն :

Կրկին կէս շրջան մը ընելէ
վերջ վերադառնալով Մարթայի
քով , — որ առանց անոր նայելու
երեւոյթը ունենալու իր աչքերէն
հեռացուցած չէր , — տեղակալ
Քօթպիւս ըսաւ :

«Օն , ճանապարհ : Ոսկին գրա-
նել պիտի երթանք : Եթէ տեսնեմ
որ զիս խափած էք , ձեզի լատ
սուղի պիտի նստի : Իսկ եթէ
ընդհակառակը , եթէ ճիշդ է ըսածդ
և զիս չէք խափած չպիտի զղջաք :

Մարթա , յայտնի է որ , տակա-
ւինչ ատ հեռու էր յաջողութենէն :
Բայց անաբղէն կարեւոր արդիւնք
ձեռք բերած է : Կը վերադառ-
նայ , աքսորի ճամբուն կռնակ կը
դարձնէ : Զինքը կ'առաջնորդեն
փափաքուած վայրը . դէպի Փօն-
թէն Օ Րիզ , ուր ժիւլիէն իրեն
պիտի սպասէր : Եթէ երբէք խոս-
տումը մոռցած չէր :

Եւ ահա քանի մը վայրկեան
վերջը , միեւնոյն այն ճամբէն , որ
քիչ առաջ դժբախտ քաղաքային
գերիներով և զանոնք վարողնե-
րով խճողուած էր , նշմարելի
կ'ըլլար պզտիկ խումբ մը որ
կ'ուղղուէր դէպի Փօնթէն Օ Րիզ :
Լաւ զինուած կատաղի երկու

Գերմաններու մէջտեղ, աղախին Մարթա կը յառաջանար, կատարեալ պղտիկի մը և խոնարհ երեւոյթով մը:

Պարտաւորուած քայլերը արագացնել հովանար մօրուքը և մեծ քիթը հովին տալով տեղակալ Քոթսլիւս ակնոցին ետեւէն պղտիկ աչքերով անհամբերութիւն և ուրախութիւն չը ցայտէր:

Դ. ԳԱՆՁԻՆ ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ժիւլիէն, Ֆօնթէն Օ Րիզի մօտ խոտերուն մէջ ընկողմանած, եղծոնական առտուան բոլոր անցքերը կը յիշէր: Եւ երբեմն հորունկ հառաչ մը կ'արձակէր: Կը մտածէր Մարթաի վրայ և կ'երեւակայէր անոր չարչարանքը զոր կը քաշկռտէր փոշոտ ճամբուն վրայ Գերմաններու մէջտեղ ճամբան շարունակելով: Եւ միշտ մտածումը կը սեւեռէր այն յանձնարարութեանը վրայ զոր Մարթա ըրած էր իրեն այնքան պնդումով: Խոնարհ համար այնքան կը պնդէր որպէսզի Ֆօնթէն Օ Րիզի մօտ կենար Ժիւլիէն:

Յանկարծ, Սարեակի երգը հնչուն կերպով լսելի եղաւ:

Ժիւլիէն դողդղաց: Որովհետեւ չէր կրնար զայն անկարեւոր նկատել: Մարթան էր որ միայն կրնար այդպէս սուլել: Յաճախ երկուքն ալ սարեակներու երգը կապկելով զրօսնած էին, և յաջողած էին այնպիսի կատարելութեան մը հասնիլ թռչներդին մէջ որ թռչուններն իսկ իրենց կը պատասխանէին:

Ժիւլիէն և իր կարգին սուլեց, և կը վերջացուց իր երգը երեք ձայնանիշներով զորս Մարթա շատ լաւ կը ճանչնար:

Այլեւս տարակոյս չկար: Մարթան էր:



Կաղալով հանդերձ, դեռատիտղան կը յառաջանար դէպի արահետը, որ կ'առաջնորդէր դէպի Կրիյ Տէ Մուան: Հաշիւ թէ թուփի մը ետեւ պահուելու ժամանակ ունեցաւ, ան որոշապէս շնչմարեց Մարթան, որուն կ'ընկերանային երեք Գերմաններ, որոնց երկուքը պարզ զինուորներ էին, և մին սպայ: Եւ այս վերջինը սոսկալի երեւոյթ մը ունէր իր մեծ քիթով և կարմիր մօրուքով որ բոլորովին կարմրցած կը թուէր: արեւուն ճառագայթներու ազդեցութեան տակ:

Եւ ահա անոնք գետնատան վանդակորմէն ներս կը մտնէին:
(Շար.)

ՄՐՏԻՍ ՏՎՈՒԱՊԱՆՔՆԵՐԷՆ

Ուսուցիչիս յիշատակին

Համաշխարհային ահուելի պատերազմէն առաջ երբ հայրենի տուները կանգուն կը մնային, ես հանդարտ լճակի մը պէս, անհոգ տղայ մըն էի դեռ...

Դպրոցն էր միակ փափաքս: Կը սիրէի ուսուցիչս, ան համաքաղաքացի էր, և ուսած էր հեռու երկիրներու մէջ. ո՞վ գիտէինչ տառապանքներով: Ան եկած էր իր ծննդավայրը ուսուցչական պաշտօնով հայրենակիցներուն ծառայելու ջերմ փափաքով: Առաջին անգամ երբ մեր դպրոցը մտաւ պաշտօնով, մէկ քանի օրեր իրեն կարեւորութիւն չի տուինք, սակայն վերջ ի վերջոյ, հասկցանք իր ներքինը և կարողութիւնը: Մենք շատ օգտուեցանք իր մտաւոր և բարոյական այդ կարողութենէն: Երկու տարւայ ընթացքին անոր համբաւը ամբողջ քաղաքին մէջ տարածուեցաւ. գրեթէ քաղաքին բնակչութեան մեծամասնութեան առջեւ խորին յարգանքներու ատարկայ դարձաւ. Ուսուցիչս բարեկեցիկ վիճակ մը ունեցաւ երկար ժամանակ: Եւ կրցաւ օգտակար հանդիսանալ իրեն հետեւողներուն: Ի վերջոյ կառավարութիւնն ալ հետաքրքրուեցաւ անով և զինքը պաշտօնի կոչեց տեղւոյն թուրք երկրորդական վարժարանին մէջ՝ Պրանսերէնի և այլ լեզուներու խիստ հմուտ ըլլալուն համար և լաւ վճարուեցաւ: Սի-

րով ստանձնեց այդ պաշտօնը և մէկ տարուան ընթացքին շատ օգտակար եղաւ թուրք աշակերտներուն եւս: Մէկ քանի տարիներ այսպէս շարունակեց. թուրք աշակերտները մեծ գոհունակութիւն կը դգային: Սակայն այդ զգացումը երկար չտեւեց: Օր մը, յիշեալ ուսուցչին թուրք աշակերտներէն մէկուն տուած ջնջին մէկ պատիժին համար թուրք աշակերտները միութիւն մը, ծեծի միութիւն մը կազմեցին, նպատակ ունենալով ծեծել զայն երբ ան դպրոցէն անցար: Յաջորդ օրերը ան դպրոց մտաւ, խնդալով բարեւեցին, բայց յետոյ աշակերտներէն մին մօտեցաւ այդ խղճամիտ ուսուցիչին և ըսաւ.

— Էֆէնտի, ըսէ՛, ինչո՞ւ պատժեցիր մեր եղբայրը. միթէ կ'ուզես պապերուդ վրէժը մեզմէն առնել:

Այս անպատկառ խօսքերով չի բաւականացաւ սակայն և սկըսաւ բռունցքի հարուածներ տեղալ անոր գլխուն: Յանկարծ միւս ընկերները կանխաւ ի պահ դրուած գաւազանները քաշելով սկսան լաւ մը ծեծել խեղճ ուսուցիչը: Ան, գրեթէ լալով, վշտաբեկ և ընկճեալ տուն վերադարձաւ ու այլեւս դպրոց չգնաց: Ան հիւանդացաւ ծեծէն ու երեք ամիս ամբողջ անկողնոյ ծառայեց: Հազիւ թէ ապաքինած... ահա պատերազմը, «Հայկական խնդիրը»... աներեւակայելի տանջանայ տարին, հասաւ:

Կառավարութիւնը ոտտիկաններու միջոցաւ ձերբակալեց և

բանտարկեց զայն : Ընտանիքի անդամները հեծեւեցան իրեն զինքը ազատելու յոյսով , բայց ձեռնունայն տուն վերադարձան : Ընտանիքը օրական չորս անգամ կերակուր և երբեմն ալ դրամ կը տանէր , որպէսզի ատով դեռ նոր ապաքինման շրջանի ենթարկուող մարմինը կ'ազդուերուի . բայց բանապահները հազուադէպ սպարազաներումէջ միայն անոր կուտային այդ կազդուրիչ ուտելիքները : Անոր կը վերագրէին յեղափոխական սրարքներ և կը մեղադրէին և որ աւելին է չատ կը չարչարէին : Ամէն իրիկուն թուրք աշակերտները (որոնք այժմ պաշտօնեայններ են) կ'երթային բանտ , կը մերկացնէին զինքը և լաւ մը կը խարազանէին , ծեծուած աշակերտի մը վրէժը լուծելու համար : Բանտին բակին մէջ կը հոսէր առուակ մը , այդ գաղանաբարոյ աշակերտները մերկացնելով զայն կը մխրձէին անոր մէջ . և դարձեալ հարուածներու տակ կիսամեռ կը ձգէին : Վերջապէս չարչարանքը իր լրման հասաւ , օր մը հրաշէկ պայտեր գամեցին անոր կրունկներուն , որուն հետեւանքով պարտաճանաչ ուսուցիչը չի կրնալով հանդուրժել , վերջապէս մեռաւ . դիակը փոխադրեցին ամայի տեղ մը , վայրի գաղաններուն ճարակ ընելու համար : Թէեւ ես և ընկերներս ջանացինք ազատել զայն մեռնելէ առաջ , բայց ի զուր : Աւաղ որ մեղմէ շատերուն ալ վերապահուած էր այդ չարչարանքներուն աւելի սոսկալին , ու մենք թողուցինք

հայրենիքը , և երազներով հեռացանք : Տարուեցանք հեռուն , չա՛տ հեռու տառապանքի ճամբաներէ , կեանքը քաշկռտելով :

ՅԱԿՈԲ ՄՈԳԿՈՍԵԱՆ

Աւակ. Եեքի Գուլէի

Ազգ. Խնմս. Որբանցի

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԼՍԻ ԸՆԿԵՐԻ

Պարսիկ բանաստեղծին մէկը յետագայ գեղեցիկ այլաբանութիւնով կը յայտնէ անիւ ընկերներու կենակցութեանը մարդուս վրայ ըրած լաւ ազդեցութիւնը :

«Ժուռ կուգայի , կ'ըսէ , և ոտքիս տակ կէս չորցած տերեւ մը տեսայ , որ անոյշ հոտ մը կը բուրէր , ծռեցայ առի , հոտոտեցի , սիրտս բացուեցաւ և իրեն հարցուցի . «Դուն որ այսպիսի քաղցըր հոտ մը կը բուրես , միթէ վա՞րդն ես :»

— Ո՛չ , պատասխանեց ան , վարդ չեմ ես , այլ փոքր ժամանակ մը հետը ապրեցայ , և իրմէ է բուրած այս անուշ հոտս :

Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր

— Որչափ շատ ապրինք , այնչափ աւելի գերեզմանին կը մօտենանք :

— Քիչ մը գլուխդ ծռէ՛ , պարոն , չըլլայ թէ արեգական դպչիս :

— Անկիրթ մարդու մը հետ վարուելէն աւելի լաւ է աւանակի մը հետ կենակցիլ :

— Ուրիշին կենացը համար շատ գաւաթ պարսկողը՝ իր կեանքը մահուան կը դատապարտէ :

— Վիճակ մը չկայ՝ որ իր ծանրութիւնները չունենայ :

FOURTEENTH ENGLISH LESSON

VERBS

To love (սիրել) բային խոնարհումը

I love = *կը սիրեմ*
 You » = *կը սիրես*
 He loves = *կը սիրէ*
 We love = *կը սիրենք*
 You » = *կը սիրէք*
 They » = *կը սիրեն :*

I loved = *կը սիրէի*
 You » = *կը սիրէիր*
 He » = *կը սիրէր*
 We » = *կը սիրէինք*
 You » = *կը սիրէիք*
 They » = *կը սիրէին :*

I have loved = *սիրած եմ*
 You » » = *սիրած ես*
 He has » = *սիրած է*
 We have » = *սիրած ենք*
 You » » = *սիրած էք*
 They » » = *սիրած են :*

I shall love = *պիտի սիրեմ*
 You will » = *պիտի սիրես*
 He » » = *պիտի սիրէ*
 We shall » = *պիտի սիրենք*
 You will » = *պիտի սիրէք*
 They » » = *պիտի սիրեն :*

Բ Ա Ռ Ե Ր

Parrot — *փէրըթ* = *թռնաթռչն*
 Cage — *քէյճ* = *վանդակ*
 To talk — *թռն թօք* = *խօսիլ*
 To say — *թռն սէյ* = *ըսել*
 Cracker — *քրէքըր* = *բլիթ*
 Green — *կրին* = *կանաչ*

Once — *ուանս* = *երբեմն*
 I saw — *այ սո* = *տեսայ*
 Gray — *կրէյ* = *դճրչ*
 Red — *րէտ* = *կարմիր*
 Head — *հէտ* = *գլուխ*

It could not — *իթ քուտ նաթ* — *չէր կրնար*

EASY STORIES

II

The Parrot

What is that in the cage ? It is a parrot Can the parrot talk? Yes, it can say, «Pretty Polk» some parrots can say, Polly

wants a cracker.» This parrot is green. Once I saw a gray parrot with red on its head. It was a very pretty parrot, but it could not talk.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (48 քիւ) 120 Դան.

Վեցամսեայ (24 ») 60 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ Տարեկան (48 ») 20 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՆԱԼՈՏ նորահասներու պատկերազարդ շարա-
թաթերթին հասցէն է՝ Պապը Ալի, Բ. Դրան ճիշդ դիմացը թիւ 43:

Ա. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ.

ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Գարու, Իքի Բարուլու
դեղարանը, կէսօրէ վերջ:

ՏԲԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Գարու, Համիտիէ թիւրպէսի
դէմ: Արիկ Իւթիւճեան դեղարանի վեր-
նայարկը:

Տղոց մորթային հիւանդութեանց
դարմանասուն

ՏԲԹ. Թ. Յ. ՄԶՐԿԵԱՆ եւ

ՏԲԹ. Թ. Գ. ԿՈՍՏՆԴ

Մեծ շուկայ, Գալբազճըլար, Պայազիտի
դրան դէմ, թիւ 18:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմաք գաբու, Մաբասճըլար,
թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամա-
նած ամերիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սկսան վաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն:
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ձեւաւոր:

ՀԱՅԿ ՄԱՀԱՅՁԱՃԵԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօր» ապրանքներ
Մահմուտ Փաշա, Բամանթօ խան, թիւ 23

ՊԻԻՔԱՍԷՔԹԻՆ

BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ
ազդու հականեխիչ եւ դարման բերնի
բորբորումներու, ակռայի ցաւերու, լին-
տերու հիւանդութեանց եւ բերնի գար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հագերու,
ակռաները մաքրելու եւ ճերմկցնելու:

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ

CRÈME SARCOPHTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ
երեք օրէն կատարելապէս կը բուժէ
հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Օդմանիէ ճատտէսի, Օսմ. Կեդր. Դեղա-
րանը, թիւ 48:

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԷՎԼԷԹԵԱՆ

Նախկին վիրարութապետ Հայտար Փա-
շայի զին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վեր-
քեր եւ ախտեր: Կը գտնուի ամէն օր
բացի Կիրակիէ, Գաբաքէօյ, Ազի. Փօս-
թին դեմաց Հին Վօյվօտայ թիւ 3

Տարագր. «ԱՆԱԼՈՏ» Հանդեսի

ԱՐԵՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ.